№ 71 Մայիսի 12 (24) 1879 Մայիսի 12 (24) № 71

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Ախալքալաքից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԸ

—

Հուտով Աւստրօ-Ունգարիայում լինելու են պատգամաւորների ընտրութիւններ Ռէյխստագի համար։ Այդ ընտրութիւնները սաստիկ յուզում են աւստրօ-ունգարական պետական մարդիկներին։ Պատգամաւորների ժողովի անդամներից կախված կը լինի ամրացնել Աւստրօ-Ունգարիայի պետական կազմակերպութիւնը, որ վաղուց վտանգի մէջ է գտնվում։

Եւրոպական պետութիւններից ոչ մէկը այնքան անհաստատ հիմունքների վրա չէ կանգնած, նրանցից ոչ մէկը այնքան ենթարկված չէ ներքին վրդովմունքներին ոչ մէկը նրանցից այնքան ուշադրութիւն չէ պահանջում իր պետական մարդիկների կողմից, որքան Աւստրօ-Ունգարիա։

Գտնվելով եւրոպական երկու մեծ պետութիւնների մէջ տեղ, թուլացրած իր կառավարութեան երկպետական ձևով և բնակեցրած զանազան ազգութիւններով, Աւստրօ-Ունգարիան ստիպված է ոչ թէ միայն ընդդիմանալ արտաքին ճնշման, այլ և իր մէջ բնակեցրած ազգութիւնների ձգտումներին և շատ անգամ հաշտեցնել այդ ազգութիւններին, չը նայելով որ նոցա շահերը բոլորովին հակառակում են միմեանց։

Անգլիական կառավարութիւնը նոյնպէս պատրաստվում է պարլամենտական ընտրութիւնների համար, որովհետև շուտով լրանալու է այժմեան պարլամենտի գործունէութեան ժամանակամիջոցը։ Այդ է պատճառը, որ լորդ Ռիկենսֆիլդի մինիստրութիւնը շտապում է, որքան կարելի է, շուտով վերջացնել իր հաշիւները թէ Աֆղանիստանի, թէ Եգիպտոսի և թէ զուլուսների հետ, որոնց վրա այժմ դարձրած է անդլիական հասարակութեան ուշադրութիւնը։ Եթէ այժմեան մինիստրութիւնը այդ երկիրներից մէկի մէջ մի նշանաւոր անաջողութիւն ունեցաւ, նա կարող է կառավարութենից հեռացրած լինել։

Այդ ապագայ ընտրութիւններն են պատճառը, որ ամեն տեղից, ուր անգլիական կառավարութեան գործերը փոքր ի շատէ խրճրճված էին, հանդուցացնող հեռագիրներ ստացվեցան։ Եգիպտոսի մէջ եղած անբաւականութիւնները վերջացրած են անգլիական և ֆրանսիական կառավարութիւնների համաձայնութեան հիման վրա, Աֆղանիստանում շուտով խաղաղութիւն կը հաստատվի և արդէն պատերազմական գործողութիւնները դադարեցրած են, իսկ անդլիական հրամանատարին պատուիրած է չը ձգտել զուլուսների երկրից որ և է կտոր միացնել անդլիական հողերի հետ։

Մի և նոյն ժամանակ անդլիական ազատամիտ կուսակցութիւնն էլ Գլադստոնի առաջնորդութեամբ պատրաստվում է պատերազմել կառավարչական կուսակցութեան հետ ապագայ ընտրութիւնների ժամանակ։

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

5 մայիսի

Գալու 1880 թուականին կը լրանայ յիսուն տարի ինչ մեր գաղթականները Կարսից կամ նրա շրջակայ գիւղերից գաղթել են դէպի այս կողմերը։

Նոքա ինչպէս յայտնի է մեծ մասամբ բնակվում են Ախալցխայում, Ախալքալաքում (շրջակայ գիւղերով), նրանցից մի փոքր մասը բնակվում է Ալէքսանդրոպոլում։

Եւ այդ յիսնամեայ քաղաքակրթութիւնը բաւականին ազդու կերպով արել է իր ներգործութիւնը գաղթականների վրա. նոյն իսկ գիւղացիք, որոնք դեռ ուսման համը առած չեն ժամանակի ազդեցութեան տակ, այնպէս «բացվել է նոցա աչքը», այնպէս ճարպիկացել են, որ շատ անգամ ճարպիկութեամբ գերազանցում են մեր վաճառականներից։

Վերջիններս խոր հոգոց հանելով յիշում են այն արժանայիշատակ ժամանակը, երբ գիւղացին բերում յանձնում էր նրանց փող, առանց նրա ոքանութեանը տեղեակ լինելու և ապրանք էր պահանջում նրանցից։

Հարկաւոր չէ կասկածել որ այդ դէպքում մեր վաճառականը օգուտ էր քաղում նրա տգիտութիւնից, իր գրպանները հաստացնելու համար։ Գիւղացին կոյր էր, որի հետ վարվում էին ըստ հաճոյից և առաջնորդում ուր կամենային։

Ո՞վ էր լսել որ գիւղացին կոպէկների, զոլոտնիկների վրա տեղեկութիւններ ունենայ։

Վերև յիշեցնելով մեր գաղթական եղբարց, մեր գաղթականութեան յիսնամեայ շրջանի մօտենալը, ես կը կամենայի առաջարկել նրանց կազմել մի նախագիծ, այդ յոբելեանը հանդիսաւոր կերպով կատարելու համար։ Այդ օրը (ի հարկէ եկող տարվայ մէջ կորոշուի մի օր որ յարմարաւոր կը լինի այդ հանդիսակատարութեան) կարելի կը լինի յիշելի անել մի ազգօգուտ գործով, որի մասին իր ժամանակին կը քննվի թէ ինչ կարող է աւելի արդիւնաւոր լինել։

Ժամանակ է որ մենք մոռանենք մեր արդէն ունեցած գպրոցները բարեկարգելու, իսկ գիւղերում այդպիսիները բաց անելու և որովհետև գիւղական դպրոցների համար դժուար կը լինի ուսուցիչներ գտնել, վատ չէր լինի որ գաղթականութեան մէջ հանգանակութիւն բացվէր և գոյացած դումարը գործածվածլինէր այն հիմնարկութեան վրա, որ ինչպէս վերև յիշեցինք, աւելի արդիւնաւոր կարող էր լինել, այն է մի ուսուցչական սեմինարիայի։

Հարկաւոր է օգուտ քաղել հայ գիւղացու ներկայ նիւթական բարեյաջող դրութիւնից։

Վերջացնելով նամակս, ես յոյս ունեմ որ ոչ միայն մեր ախալցխաբնակ կամ ախալքալաքաբնակ գաղթականները, այլ և այն անձինք որոնք այժմ բնակվում են Թիֆլիսում կամ Անդրկովկասի միւս քաղաքներում, (նոյն իսկ գաղթականներից) համակրութեամբ կը վերաբերվեն իմ նուաստ առաջարկութեանը և չեն զլանայ իրանց դատողութիւնն անելու այդ հանրաշահ գործի վերաբերութեամբ։

Խ. Մարանկոզեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Գրաչարների հիւանդութեան պատճառով այսօրվայ համարը հրատարակում ենք կէս թերթի մեծութեամբ։

—

Մեզ հաղորդում են ՄԵԾ-ԴԱՐԱԳԼԻՍԱՑԻՑ, որ Բամբակի կողմերի այն բնակիչները, որոնք զանազան մթերքներ են տանում Ալէքսանդրապոլ վաճառելու, սաստիկ դանդաղում են ջաջուր անուանված տեղի ճանապարհի ղատավայի վերակացուից, որը գիւղացիներից ճանապարհի հարկը կրկնապատիկ է առնում։

—

ԹԻՖԼԻՍԻ Մարիամեան Յովնանեան օրիորդաց ուսումնարանի տարեկան քննութիւնները կը սկսվեն մայիսի 15-ին և կը վերջանան նոյն ամսի 25-ին։ Մանրամասները կարելի է իմանալ «Մշակի» մէջ տպված յայտարարութիւնից։

—

ԹԻՖԼԻՍԻ գործակատարների փոխադարձ օգնութեան ընկերութեան դրասենեակը խնդրում է պ. պ. անդամներին ներկայ գտնվել մայիսի 13-ին, առաւօտեան 10 ժամին ընդհանուր ժողովին, որ լինելու է ընկերութեան բնակարանում, Գօլովինսկի պրոսպէկտի վրա, Զիթախօվի տանը։ Այդ ժողովի ժամանակ պէտք է քննվի ընկերութեան սկզբունական հարկաւոր եղած իրերը գնելու հաշվի նախագիծը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 26 ապրիլի

Զէյթունէն նոր տեղեկութիւններ չունենք. Հալէպի կառավարիչ Քեամիլ բաշայ երբ պաշտօնական եղաւ, նա մի ստորագրութիւն կը հաւաքէ ժողովրդէն ցցնելու համար թէ ինքն արդարութեամբ կառավարեր է, սակայն Սսոյ կաթողիկոսն և եւրոպական հիւպատոսք չեն ուզած ստորագրել, սոցա մերժումն այդ հանրագրութիւնը անարժէք կանէ։ Բայց հոն մի թիւրք պաշտօնեայ, կարծեմ նախագահ առևտրական ատենին, մի փառաւոր սուր կընծայէ նմա, որոյ վրայ փորագրուած է «առյաղթողն Զէյթունի»։ այս պժգալի շողոքորթութիւնն Կ. Պոլսոյ մամլոյ կողմէ պէտք եղած բողոքներն ընդունեց և Ֆրանսերէն «Մթամպուլ» թերթին Քեամիլ բաշայի դէմ կծու լեզու մը գործածելով կասէր, «ուրեմն Զէյթունի մէջ հայոց դէմ կառավարութիւնը պատերազմ կանէր»։ «Մթամպուլ» կը պահանջէ որ թէ Քեամիլ բաշա և թէ նուիրատուն հաւասարապէս պատժուին, և մեր արդարասէր կառավարութիւնը ի պատասխանի այս տողերուն ազդարարում կանէր Ֆրանսերէն թերթին որ եթէ ուրիշ անգամ բարձրաստիճան պաշտօնէից նկատմամբ այսպիսի լեզու գործածէ, պիտի խափանուի։

Վան երթալիք Ցանձնաժողովն 3 օր առաջ մեկնեցաւ ասի. Աղաբէգեան Սարգիս էֆէնտի մեկնելէ առաջ Սուլթանին ներկայացաւ, որ սիրալեր ընդունելութիւն մը արաւ հայ պատուիրակին. նոյնպէս Սարգիս էֆէնդի երկար տեսակցութիւն ունեցաւ Ս. Պատրիարքի հետ, բայց սրբազանը թերահաւատ է այս մասին։—Պ. Մարկոս Աղաբէգեան իբր օգնական և քարտուղար կընկերանայ Ցանձնաժողովին. այս պարոնին վրայ մեծ վստահութիւն կայ։

Երրորդ յանձնախումբն ևս պատրաստ է մեկնելու դէպի Տիգրանակերտ և Միջագետք. անդամք են Ապէտի պէյ ազգաւ տաճիկ—առևտուր, և Անտոն Մանաս էֆէնդի հայ—կաթոլիկ հասունեան կուսակցութիւնէն։—Թէպէտ և կասեն թէ այս պարոնն բաւական ազգասէր մէկն է, սակայն սոյն ընտրութիւնն դժգոհութիւն պատճառեց. զի մէկ կողմ դնելով ուրիշ խնդիրներ, կը հարցնենք ինչ հարկ կար հասունեան մասէն Հայաստանի բարեկարգիչ մը խրկել։

Ապէտին պէյ Պատրիարք սրբազանի հետ երկար տեսակցութիւն մը ունեցաւ, ինչպէս նաև Մանաս էֆէնտի. սոյն էֆէնտին Պատրիարքի օրհնութիւն խնդրելով կաղաչէր նորա աջակցութիւն իրենց պաշտօնի յաջողութեան համար. Պատրիարք սրբազանը կը պատասխանէ թէ ինքն յարգելով և սիրելով իրենց անձն բարի ճանապարհորդութիւն կը մաղթէ, բայց բնաւ յոյս մը չունի որ իրենց աշխատութիւններն պիտի կարենան արդիւնաւոր լինել, «Ձեր մէջ կասէ քանի որ գըլխարկաւոր եւրոպացի մը չը կայ, ոչինչ բարեկարգութիւն յուսալի է կասէ Հայաստանի համար. Դուք կերթաք զսպել քիւրդերն, բայց չէք գիտեր որ քիւրդերու պաշտպանն նոյն իսկ Կ. Պոլիս նախարարաց խորհուրդին մէջն է. Ճէվդէթ բաշա, երբեմն ներքին գործոց և արդարութեան նախարար, կառավարիչ Ասորեստանի և այժմ նախարար առևտրական գործոց, նա քիւրդերուն տային է, նա շարունակ կաշառ կառնու քիւրդերէ, ուրեմն առ ինչ օգուտ ձեր ջանքերն. գործոց այս վիճակին մէջ և ոչ մի բարիք մը կրնամ յուսալ հայոց համար»։

Ապէտին պէյ կը պատասխանէ թէ տակաւին կառավարութիւնէն այդքան յուսահատ լինելու չէ և կը խնդրէ սրբազանէն որ յոյս ունենայ։

Ցանձ. անդամներն կը մեկնին դերագին

պատրիարքի ներկայութիւնէն, և կարծեմք նոքա ևս համոզուած կերևին սրբազանի խօսքերու ճշմարտութեանն: Դեռ յայտնի չէ թէ ոքա երբ ճանապարհ պիտի ելլեն:

Այս Ցանձնաժողովներն եթէ ապարդիւն են, թերևս աւելի արդիւնաւոր լինեն Անգղիոյ ազատական մասին խորհուրդներն. պ. Կլատսթոն և իւր կուսակցութիւնը թւի թէ կը փափագին Արևելեան քրիստոնէից վիճակն գէնք գործածել Պէքօնսֆիլտի դահլիճին իբր դէմ. այս նպատակաւ մի անգղիացի պարոն, որոյ անունն չեմ յիշեր այս վայրկենիս, խրկած էին Կ. Պոլիս որպէս զի քրիստոնէից վիճակի վրայ ստոյգ տեղեկութիւններ ստանան: Պարոնը Զօն Պրայսի մի նամակաւն ներկայացաւ Սրբազան Պատրիարքի և երեք ժամու տեսակցութիւն մը ունեցաւ: Այժմ դէպի Բուլգարիի կը ճանապարհորդէ և քիչ ատենէն պիտի վերադառնայ. այնուհետև Հայաստան պիտի երթայ և անտի պիտի շարունակէ իւր թղթակցութիւններն: Այլ չեմք գիտեր թէ ազատական մասն երբ իշխանութեան ղեկն ի ձեռին ունենայ, արդեօք Պէքօնսֆիլտէ տարբեր քաղաքականութիւն մը պիտի՞ ունենայ: Անցեալներն ազատականաց մի մեծ թերթի Կ. Պոլսոյ թղթակցին հետ երբ կը տեսնուէինք կասէր թէ հայերն շատ լաւ պիտի անեն երբ մի մեծ դաղթականութիւն անեն Անգղիոյ ովկիանոսի ստացուածոյն մէջ, անգղիական կառավարութիւնը մեծ նպաստներ կընձեռէ նոցա և ապահով երջանիկ վիճակ մը կունենաք. մենք ծիծաղեցանք այս գաղափարին և հարկ եղած պատասխաններն տուինք, բայց անգղիացի պարոնը յամառ է և չը համոզուիր:

Բայց ինչ որ ալ ըլլան օտարաց շահերն և դաղափարներն, մենք չը շեղիմք այն ընթացքէն որ կը հետևիմք Բերլինի վեհաժողովէ վերջ. ինքնօգնութիւն. ահա մեր նշանաբանը և երբ կը տքնիմք մեր ամէն ջանքերն ազգային դաստիարակութեան նուիրել, մեր դժուարութեանց մէջ, մեր խոնջ վայրկեաններու միջոցին կենդանութեան ոգի ծծեմք, կենաց շունչ առնումք մեր հայրենի յիշատակներէն: Այս շունչն, այս ոգին կը պարզևեն մեզ հայրենասուէր վարդապետներ որք հայրենի լեռներն ու ձորերն թափառելով կուգան մեր աշխարհի սիրոն մեր վիրաւոր սրտերն կազդուրել: Դեռ մի քանի ժամ է որ Կ. Պոլսոյ մամուլն շնորհեց մեզ մի պատուական մատեան որ թաց թերթերն ձեռքքս են և կարդալով չեմ յագենար. այդ մատեանի անուն է «Թորոս աղբար». դիտեմ պիտի ծիծաղիք, բայց մենք արտասուած էինք երբ այդ անունն մի գիշեր Սրուանձտեանց վարդապետի բերնէն կը լսէինք մինչ իւր շուրջն բոլորած ղմեղ հայ աշխարհի ներկայ վիճակն կը ներկայեր մեզ:

Երբ մեր պատուիրակներն յԵրօպա կը թռչէին, երեք վարդապետներ ի Հայաստան կը դիմէին ժողովուրդը պատրաստելու: Գարեգին վարդապետ Սրուանձտեանց, այս հանճարեղ հայրենասուէր երիտասարդը այսօր կը հրատարակէ իւր ճանապարհորդութեան տեղեկագիրն, Ա. մասն միայն:—«Թորոս աղբար» կանուանէ զայն, այս անուան հետաքրքիր է.ք, թող հեղինակն ինքն խօսի:

«Մեծին Հայաստանի չորրորդ Հայք նահանգի գաւառներէն մինն է Ծովեաց աշխարհ, Ծովք Մեծ գրուած է նաև Ծովք. առաւել անուանի եղած՝ Ծովք կամ Ծովք Շնորհալուոյն հօր, տոհմին և եղբարց բնակավայր լինելով: Իսկապէս ծով կամ ծովիկ մը կայ (4 ժամ երկայն, 1 ժամ լայն,) Խարբերդին, Արղնու և Մալաթիոյ լերանց միջին, բաժանկաձև..... Ես կը կարծեմ թէ՝ ծովք կամ ծովքն է ծովիկ բառ, սա իւր մէջն ունէր դղեակ մը, ուստի և անուանուած է Ծովք-Դղեակ: Հոս Հայաստանեայց եկեղեցւոյ և ազգի շնորհքն ծագած է: Հոս ծնած, շնչած, լացած, երգած, գրած և աղօթած է Ներսէս Շնորհալին, ուստի և իմ այս անգամի ուղեւորութեան ամենամեծ շահս եղաւ հանդիպիլ և երկիրպագանել այս ծովիկին և դղեկին, ջրոց և տաճարի աւերակին, ուր ամենայն ինչ շնորհալի էր:»

Հեղինակն ծովիկին նկարագիրն հրաշալի կերպով անելէ յետոյ կը շարունակէ:

«Գիշերը անքուն անցուցինք, արշալուսին նաև նստեցանք կղզին երթալու. աւազ աչերուս, սև ու սպիտակ քարեր ցիրուցան խարխալեալ որմունք և եթ կան....

«Համբոյր քարերուն, համբոյր հողերուն, համբոյր փլատակաց վրայ բուսած խոտերուն: Եւ ցօղն Հայաստանի հոգւոյն արցունքն որ ամեն առաւօտ կիջնէր շաղախել կղզիկիս փոշիներ ու քարերու խիճերէն ծլած թուփերը, լցեցի, կրծեցի, ճաշակեցի, իմ ալ ցօղերս թափելով հոն.....

«Դեռ ցամաքը չելած, հաւք մը կը տեսնեմ, սևորակ փետուրով, բարակ վզիկով, կըլորիկ գլխով, զոր ծռած էր մէկ քով, թխորակ աչերով, սպիտակ լանջով, ծնկները ծալած ջրոյն ալեաց վրայ կերերայ, սգաւորի մը կամ անգին կորուստ ունեցողի մը կը նմանի, բընութեան և առաւօտեան բոլոր գեղեցկութիւնն ու զուարթութիւնը իրեն վրայ չազդեր, անփոյթ հայեացք մը կը ձգէ աչքի ծայրով դէպի մեզ երբեմն: Մենակ միայնակ է ինքն բոլորովին: Ցանկարծ ծովուն յատակը կիջնէ, կանհետանայ, խորերը կը յուզէ, և ահա ջրոյն երեսը կելնէ պարապ և ունայն, մի և նոյն տխուր տխրալուս դիրքով....

Ինչ կորուստ, խեղճ հաւուկ:

—Ի՞նչ է աս թռչնոյն անունը, հարցուցի ծովացի ընկերներէս:

—Պատասխանեցին. Թորոս աղբար է իւր անուն:

«Թորոս աղբար, առ նոր զարկ մը սրտիս... Արդեօք որո՞յ անձնաւորութիւնն էր այն:

«Ա՛յ Թորոս աղբար, որ կը յուզես ծովուս խորերը, կը յուզես սրտիս անդունդները: Թորոս աղբար, ո՞ր մէկ կորուստներդ կը խնդրես, արդեօք տաճարին եթէ դահլիճին, Լևոնեանց եթէ Ներսիսեանց, Հեթումե՞անց եթէ Գրիգորիսեանց, խո՞յրն եթէ սաղաւարտն, խա՞չն եթէ գայիսոնն, փետուրբ՞ն եթէ պողովատիկն, դրո՞շմն եթէ դրօշակն, Աստուածաբան մատեա՞նն եթէ գահոյք արքունական, ծիրանե՞ն եթէ եմիփորոնն, վկայասիրին բուրվառն ու աղօթամատո՞յցն եթէ Թորոսի սուրն վրիժուց:

«.....Է՛յ Թորոս աղբար, թռիր ինձ հետ, թռիր գլեզ տանեմ հայրենիքէն հեռացեալ հայոց ի տես, ի յոյզ և ի յոյս.....

«Բայց դու կը մերժես, չես համոզուիր, և ոչ տեղէդ կը բաժնուիս:

«Ա՛յ, դու ուղիղ ես, յուզէ, խնդրէ, որոնէ այդ տեղ. Կորուսաք՝ կորսուած տեղը:»

Ահա կը տեսնէք թէ ինչ բանաստեղծական մտածութեամբ է որ այդ գիրքն Թորոս աղբար մեղամաղձիկ անունն կը կրէ:

Հարկ էր որ «Մշակի» ընկերցողներն աւելի կատարեալ դաղափար մը ունենան այս պատուական գրքի վրայ, ո՞ւր էր թէ «Մշակ» ի Պոլիս գրագէտ թղթակիցներ ունենար որք Կ. Պոլսոյ հրատարակութեանց լուծումն ու քննադատութիւնը «Մշակի» սիւներու մէջ անէին. բայց վախեմք թէ այս փափագն միայն փափագ մնայ, և մեզ նման՝ գրական ասպարիզին մէջ բոլորովին օտար եղողներու համառօտ տեղեկութիւններովն գոհանան, կամ լաւ ևս գժգոհանան, «Մշակի» ընթերցողք:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լրագիրները հաղորդում են, որ բուլգարական իշխան Բատենբերգ Վիէննայից կուղևորվի Բերլին, Փարիզ, Լոնդոն և Հռոմ: Այնտեղից իշխանը կուղևորվի Կ. Պոլիս սուլթանին ներկայանալու համար: Վարնայում իշխանը բուլգարական հողի վրա կը լինի, Տրնովոում հաւատարմութեան երդում կը տայ և մշտապէս կը բնակվի Սոֆիա քաղաքում:

—«Standart» լրագրի Կ. Պոլսի սեփական թղթակիցը ասում է. «Զը նայելով այն հանգստացնող լուրերին, որոնք ստացվում են Լոնդոնում Արևելեան Ռումելիայից և Ադրիանապոլից, այդ տեղերից Կ. Պոլիս բաւական վատ լուրեր են ստացվում: Ադրիանոպոլում մահմեդականները տանջվում են սովից և այդ պատճառով կողոպտում են տներ և խանութներ: Ասում են, որ Ռէուֆ-փաշա հրաժարական է տուել, որ դեռ ևս ընդունված չէ: Կրիտի վրա ապստամբութիւնը շարունակվում է: Թիւրքաց կառավարութեան աղքատութիւնը այն աստիճանի է հասնում, որ մի դժբաղդութեան պատճառ կը դառնայ:»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆԻՑ

ՎԻԷՆՆԱ, 9|21 մայիսի: Բուլգարական իշխան Ալէքսանդր Բատենբերգ այսօր ներկայացաւ Նորին մեծութեան կայսր Ֆրանց-Յովսէփին: Յետոյ իշխանը այցելեց մինիստր կոմս Անդրաշիին:

ԲԵՐԼԻՆ, 9|21 մայիսի: Պ. Զէյդելից ընտրվեցաւ նախագահ գերմանական ազգային ժողովի:

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ (ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԷՈՒՄ)

Վաճառում են հետևեալ հայերէն գրքերը՝

	Ր.	Կ.
1. Մինաս Չերազ՝ ԳՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ	1	—
2. — — ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ	1	—
3. — — ԻՆՉ ՇԱՀԵՑԱՆՔ ԲԵՐԼԻՆԻ ՎԵՀԱԺ	—	40
4. — — ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԻՏԱԼԻԱՑ	—	60
5. Առաքելեան՝ ԳԷՈՐԳ ՌՕԼԼԷՍՏՕՆ (Թարգմ.)	—	60
6. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ ՊԷՊՕ կոմէդիայ 3 արար.	—	60
7. Բարրօ՝ երեխաների առ իրենց ծնողք պարտ.	—	40
8. Տիւզէնճեան Տոմարակալութիւն (կազմած)	2	—
9. Կոստանեան՝ Հիւսուածք 3 հատոր	3	—
10. Պող և Վիրգինէ, ոսկեկազմ, գրաբար	3	50

Նուտով լոյս կը տեսնի Ամենարիւսի ԹԱՒԱՄԱԶ ՄԵՂՈՒ անունով գրքոյկը, թարգմանութիւն օր. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆԻ, գեղեցիկ պատկերներով. գինը լինելու է 40 կ. գրքոյկը արժանացել է առաջին ՊԱՐԳԵՒԻ Ֆրէբէլեան ընկերութեան. վաճառվելու է ԿԵՆՏ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ:

Անցագիրների կանոնադրութեան XIV հատորի 1 յօդուածի համեմատ ոչոք իրաւունք չունի հեռանալ իր բնակութեան տեղից առանց օրինաւոր վկայութեան կամ անցագրի (յօդ. 2, 5, 4, 9, 10, 12, 13, 14, և 15 նոյն կանոնադրութեան): Նոյն կանոնադրութեան 141 յօդուածի համեմատ մեշչանները, բոլոր կարգի գիւղացիկ և ծառաները, որոնք իրանց բնակութեան տեղից բացակայ են և գտնվում են կայսերութեան զանազան տեղերում 30 վերստ հեռաւորութեամբ իրանց բնակութեան տեղից արհեստներով կամ աշխատանքով ապրելու համար, պարտաւոր են տրված անցագիրներ ունենալ: Ծառայութեան մէջ գտնվող և ծառայութենից դուրս եկած աստիճանաւորների համար, նոյնպէս հոգևորականների, կուսակրօնների, տօհմական և անձնական ազնուականների, սրանց այրիների անցագիր վերցնելու ձևը մեկնված է անցագիրների կանոնադրութեան XIV հատորի 51, 52, 57, 59, 60, 63, 68, 71, 72, 75, 89, 92, 112, 118, 119, 139, և 142 յօդուածների մէջ: Նոյն կանոնադրութեան 41 յօդուածի հեմեմատ ժամանակամիջոցը անցած անցագրով ոչոք ոչ մի տեղ ապրել չէ կարող: Այն անձները, որոնք ժամանակամիջոցը անցած անցագիրներ ունեն, կամ նրանց կորցրել են, պարտաւոր են անցագիրների կանոնադրութեան 42 և 211 յօդուածների համեմատ վարվել: Առանց օրինաւոր վկայութեան կամ ժամանակամիջոցը անցած անցագիրներով ապրողները, բացի այն որ պէտք է տան հարկաւոր վճարը անցագրի համար Հաշտարար դատաւորներից որոշված պատիժների կանոնադրութեան 61 յօդուածի համեմատ: Մի և նոյն ժամանակ հարկաւոր են համարում յայտնել քաղաքի պ. պ. բնակիչներին, որ այն անձինքներին, որոնք կը բռնվեն առանց վկայականների կամ անցագիրների երբէք չեմ յանձնի մէկի պատասխանատուութեանը, այլ էտապով կուղարկեմ իրանց հայրենիքը: Մայիսի 6 1879 թ. Թիֆլիս: Թիֆլիսի գլխաւոր Պոլիցիմէյստեր զնդապետ Մերկլինգ:

1—3

ԹԻՖԼԻՍԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ պատիւ ունի յայտնել ընկերութեան պ. պ. անդամներին, որ ընկերութեան ԲՆԱԿԱՐԱՆԸ արդէն վարձված է Զիմախովի տանը, Գօլովինսկի պրոսպէկտի վրա և խնդրում է անդամական ՏՈՒՐՔԸ չը վճարող պարոններին, նոյնպէս ընկերութեան անդամ գրվել ու, փող վճարելու և տոմսակ ստանալու համար ցանկացողներին դիմել ընկերութեան ստարշինա Պ. ՄԵՀՐԱԲՕՎԻՆ, Գօլովինսկի պրոսպէկտի վրա, Շիրօկովի տանը, խանութ № 5:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ իր ներկայութեամբ ՄԱՅԻՍԻ 22-ին լինելու է ԱՃՈՒՐԴ առանց ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ՄԵՏԵԼԻ ամրոցի և ԲԱՆՏԻ համար երեք ստուարանի ՓԱՅՏ հասցնելու համար: ՄԵՏԵԼԻ ամրոցի համար հարկաւոր է 149 սաժէն և 1 արշին, իսկ բանտի համար 136 սաժէն: Փայտը պատրաստվում է եկող 1880 թուականի համար.

1—3

200 տակառ ՑԷՄԵՆՏ (Պորտլանդի) ստացված է: Դիմել արխիտէկտոր պ. ՍԿՕՑԻԱՆԻՆ, Արսենալնայա փողոցում, Տէր-Ղուկասովի տանը:

ՄԱՐԻԱՄԵՆ-ՅՈՎՀԱՆՆԵՆ ՕՐԻՈՐԴԻՑ ուսումնարանի տարեկան քննութիւնները լինելու են հետևեալ կարգով.—

Մայիսի 15-ին Կրօն և Սրբազան Պատմութիւն

„ 16 և 17 Հայոց լեզու

19 Ռուսաց լեզու

22 Թուաբանութիւն

25 Բնական գիտութիւններ և Աշխարհագրութիւն

Տեսուչ ուսումնարանի.

Յ. Զիգիանեանց

Дозволено Цензурою 11 Мая 1879 г. Тифлисъ Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона